

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան


<<Դասախոսն Ուսանողի Աչքերով>>

հարցման էլեկտրոնային ծրագրի

Բնութագիր

ԵՊԲՀ կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնը յուրաքանչյուր կիսամյակի կտրվածքով անցկացնում է <<Դասախոսն Ուսանողի Աչքերով>> (ԴՈՒԱ) սոցիալական հարցումը, որը հնարավորություն է տալիս ուսանողներին բազմակողմանիորեն և օբյեկտիվ գնահատական տալ ինչպես առանձին դասախոսների, այնպես էլ ամբիոնների կատարած աշխատանքին: Հարցումն անց է կացվում էլեկտրոնային տարբերակով: Մշակված է հատուկ ծրագիր, որն իր մեջ ընդգրկում է բավականին ծավալուն տվյալների բազա: Բազայում ներառված են ԵՊԲՀ-ում ընդգրկված բոլոր ամբիոններն՝ իրենց դասախոսական կազմերով: Յուրաքանչյուր կիսամյակի համար ծրագրի մեջ մուտքագրվում են տվյալներն ըստ խումբ ↔ դասախոս կապի (ամբիոններից տրված տեղեկատվության համաձայն), ճշտվում է ուսանողների քանակը (դեկանատներից տրված տեղեկատվության համաձայն), այնուհետև ծրագիրը մեխանիկորեն ստեղծում է մեկ անգամյա օգտագործման լոգիններ ըստ խմբերի և ուսանողների քանակի: Լոգինները տրամադրվում են ուսանողներին, որոնք էլ անանուն կերպով on-line ծրագրի միջոցով կատարում են իրենց քվեարկությունը: Հարցումն անցկացվում է կիսամյակի ավարտից հետո, այսինքն՝ ուսանողը հնարավորություն է ունենում գնահատել իրեն դասավանդված դասախոսներին տարբեր կրիտերիաներով, նաև գնահատել ամբիոնների կատարած աշխատանքը և ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Ինտերֆեյսի նկարագիրը – Ծրագրի գլխավոր էջն ունի հետևյալ տեսքը.



Ձախ կողմում աշխատանքային գործիքներն են:

“ Դասախոսներ“ բաժնում ԵՊԲՀ-ի դասախոսական կազմն է՝ ըստ ամբիոնների և պաշտոնի:

“Առարկաներ“ բաժնում համալսարանում ուսուցանվող առարկաներն են ըստ ամբիոնների և ստորաբաժանումների բաշխվածության:

“ Ամբիոններ” բաժնում ներկայացված է ամբիոնների ցանկը:

“Խմբեր ” բաժնում տվյալ կիսամյակում ներառված խմբերն են ըստ ուսանողների քանակի:

“Ստորաբաժանումներ ” բաժնում համալսարանում գործող ստորաբաժանումներն են ըստ ֆակուլտետների և կուրսերի:

“ Խումբ ↔ դասախոս” բաժնում օպերատորի կողմից տվյալ կիսամյակի համար մուտքագրված տվյալներն են, այսինքն՝ բոլոր խմբերի համար առանձին-առանձին մուտքագրվում են տվյալները, թե որ խմբում որ առարկան ով է դասավանդել (նշելով նաև գործնական պարապմունք է, թե դասախոսություն):

Հավելված 1

Օրինակ՝

Ստոմատոլոգիական 1 կուրս	155	Ընդհանուր քիմիա	Հովեյան Գագիկ Ավետիքի	Գործնական
Ստոմատոլոգիական 1 կուրս	155	Կենսաբանություն	Ենգիբարյան Ազատ Ադիբեկի	Գործնական
Ստոմատոլոգիական 1 կուրս	155	Մաթեմատիկա, բժշկ. ինֆորմ.	Ռիլիխանյան Գրետա Ռաֆայելի	Գործնական
Ստոմատոլոգիական 1 կուրս	155	Ընդհանուր քիմիա	Կարապետյան Սուսաննա Աղասիի	Դասախոսություն
Ստոմատոլոգիական 1 կուրս	155	Ընդհանուր քիմիա	Քոչարյան Կարինե Մուսայելի	Դասախոսություն

և այսպես շարունակ:

“Մուտքային տվյալներ”-ը – դրանք ծրագրի կողմից թողարկված լոգիններն են , որոնք տրամադրվում են ուսանողերին: Ուսանողը մուտք է գործում կայք և անհատապես իր համար նախատեսված գաղտնաբառով մուտք է գործում իր խմբի էջը, որտեղ արդեն ներառված են իրեն դասավանդած դասախոսները: Լոգիններն ունեն հետևյալ տեսքը՝

Ստորաբաժանում	▲ խումբ	◆ Լոգին	◆ Ճածկագիր
Դեղագիտական 1 կուրս	175	ph-162-1	3UCALmtH
Դեղագիտական 1 կուրս	175	ph-162-2	YWGjgfy1
Դեղագիտական 1 կուրս	175	ph-162-3	7sQqDuhD
Դեղագիտական 1 կուրս	175	ph-162-4	cGFyh2ja
Դեղագիտական 1 կուրս	175	ph-162-5	MMAo0UWN

“Հարցաշարեր” բաժնում հարցերն են , ըստ որոնց քվեարկում է ուսանողը: Տարբեր հարցաշարեր են մշակված բակալավրիատի և մագիստրատուրայի համար՝ հաշվի առնելով ուսումնառության տարբերությունները, օրինակ՝ 1-3 կուրսերի համար դասախոսության դեպքում տրվում են հետևյալ հարցերը՝

Հավելված 1

№	Հարց
1	Նյութը մատուցում և քննարկում էր մատչելի ու համակարգված
2	Ունեք հստակ խոսք և տիրապետում էր դասախոսություն կարդալու արվեստին
3	Ընդգծում էր նյութի մասնագիտական և գործնական հետազոտ կիրառությունը
4	Կարդացած դասախոսությունը լրացնում էր դասագիրքը և պարունակում էր նոր տվյալներ ու մոտեցումներ

Գործնականի դեպքում՝

1	Նյութը մատուցում և քննարկում էր մատչելի ու համակարգված
2	Բացատրում էր նյութի դժվարամատչելի հատվածները և շեշտադրում առանցքային հարցերը
3	Ընդգծում էր նյութի մասնագիտական և գործնական հետազոտ կիրառությունը
4	Զարգացնում էր ինքնուրույն մտածելակերպ և հնարավորություն էր տալիս ուսանողին զգալու դասի լիիրավ մասնակից
5	Ուսանողների հարցերին տալիս էր սպառիչ պատասխաններ
6	Ապահովում էր պատշաճ կարգապահություն
7	Ունեք հստակ խոսք և տիրապետում էր դասավանդման արվեստին
8	Բարյացակամ և հարգալից էր ուսանողի նկատմամբ

Ամբիոնների գնահատման դեպքում ևս տարբեր մոտեցումները, այսինքն՝ տարբեր կուրսերի համար մշակված են տարբեր հարցեր՝ հաշվի առնելով որոշակի առանձնահատկություններ, օրինակ՝ ցածր կուրսերում բացակայում է հիվանդ-ուսանող շփումը: Ամբիոնների գնահատման դեպքում 1-3 կուրսերին տրվում են հետևյալ հարցերը՝

Հավելված 1

1	Դասընթացի սկզբում ամբիոնի կողմից որքա՞ն հստակ են ներկայացվել առարկայի կրթական վերջնարդյունքները (գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որոնուսանողը պետք է ձեռք բերի դասընթացի վերջում)
2	Դասընթացի վերջում որքանո՞վ ձեռք բերեցիք համապատասխան կրթական վերջնարդյունքներ (գիտելիք և կարողություն)
3	Դասախոսությունների և գործնական պարապմունքների ժամանակ ի՞նչ չափով էիք օգտվում ամբիոնի ուսումնական միջոցներից (մուլյաժներ, սիմուլյատորներ, պատրաստուկներ, պաստառներ և այլն)
4	Գրադարանում (կամ ամբիոնում) առարկայի յուրացման համար անհրաժեշտ գրականությունը որքանո՞վ էր բավարար
5	Ձեր կարծիքը ամբիոնի թեստերի վերաբերյալ

Մագիստրատուրայի դեպքում`

1	Նյութը մատուցում էր մատչելի և համակարգված
2	Ընդգծում էր նյութի գործնական կիրառելիությունը
3	Զարգացնում էր ինքնուրույն մտածելակերպ և հնարավորություն էր տալիս ուսանողին զգալու լիիրավ մասնակից
4	Ուսանողների հարցերին տալիս էր սպառիչ պատասխաններ
5	Ուներ հստակ խոսք և տիրապետում էր դասավանդման արվեստին
6	Բայրացակամ և հարգալից էր ուսանողի նկատմամբ
7	Դասապրոցեսը հիմնված էր կլինիկական դեպքերի, իրավիճակային խնդիրների, ոլորտո իրականացվող հետազոտությունների արդյունքների քննարկման վրա

“Հաշվետվությունները ” – դա վերջնական արդյունքն է, որը տրամադրվում է ամբիոններին:

Այստեղ ըստ ամբիոնների նշվում է տվյալ կիսամյակում դասավանդված դասախոսների ցանկը և նրանց անվան դիմաց տարբեր կրիտերիաներով ստացված միջինացված գնահատականները: Հաշվի է առնվում նաև քվեարկած ուսանողների քանակը: Արդյունքը համարվում է հավաստի , եթե քվեարկել են ուսանողների ընդհանուր թվի մինիմում 30% -ը:

Հավելված 1

Ստացված արդյունքներից ելնելով՝ ծրագիրը յուրաքանչյուր դասախոսի համար ստանում է մեկ միջինացված գնահատական: Նույն գործընթացն իրականացվում է ամբիոնների աշխատանքի գնահատման դեպքում: Արդյունքում միջինացված գնահատական ենք ստանում նաև ամբիոնի աշխատանքի համար:

Հաշվետվության օրինակը կցված է

-ների մեջ է՝ առնվում 3,5-ից ցածր միջինացված գնահատականը, որը համարվում է ոչ բավարար:

Եթե միևնույն դասախոսը անցկացնում է և՛ դասախոսությունը, և՛ գործնական պարապմունքը, ապա երկու դեպքի համար էլ առանձին-առանձին գնահատվում է:

Վերոնշյալ բոլոր դաշտերը յուրաքանչյուր կիսամյակ զրոյացվում են և բոլոր տվյալները մուտքագրվում են ըստ տվյալ կիսամյակի տվյալների: Միայն “Հաշվետվություններ” դաշտը մշակվում և գեներացվում է ծրագրի կողմից:

Տեխնիկական նկարագիր

Ծրագիրը գրվել է PHP ծրագրավորման լեզվով (Pure PHP), ինչպես նաև օգտագործվել են JavaScript՝ մասնավորապես JQuery (AJAX), արտաքին տեսքի համար օգտագործվել է Bootstrap 3 հիմքի վրա ստեղծված Metronic կադապարը: Պահոցի համար օգտագործվել է MySQL տվյալների շտեմարանը:

Նվազագույն պահանջներ՝

Apache 2.0

PHP 5.3.10

MySQL 5.1